

Արփի ԼԱԶԱՐՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի շրջանավարտ,
ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի
դատավորի օգնական

ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱԶՄԻ ԱՆՓՈՓՈՒՄԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆԲԳՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԿՉԲՈՒՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՈԱԶԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունը թևակոխեց դատաիրավական բարեփոխումների մի նոր փուլ, երբ սկսվեցին առավել գնահատվել մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքները, միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները և երաշխիքներ ստեղծվեցին այդ իրավունքների պաշտպանության ու միջազգային պարտավորությունների պատշաճ կատարման համար: Մասնավորապես՝ 2002 թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրեց Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի Կոնվենցիան, ինչի հետևանքով երկրի ստանձնած միջազգային պարտավորություններին համահունչ փոփոխություններ պետք է կատարվեին ներպետական համապատասխան ոլորտներում: Այս ամենն անհրաժեշտություն առաջացրեց կատարելագործելու նաև քրեադատավարական օրենսդրությունը:

ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք», 66-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով», իսկ 69-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցանք կատարելու համար դատապարտ-

ված յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով վերահաս դատական ատյանի կողմից վերանայման իրավունք»:

Այս նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ դատական քննությունը է քրեական դատավարության կենտրոնական և որոշիչ փուլ է, քանի որ նախ՝ այս փուլում են քննարկվում և լուծվում դատավարության հիմնական խնդիրները՝ դատարանը լուծում է գործն ըստ էության և տալիս է ցանկացած դատավարության հիմնական հարցի պատասխանը՝ արդյո՞ք մեղավոր է անձը, թե՞ ոչ, և կիրառելի է նրա նկատմամբ պատիժ, թե՞ ոչ: Երկրորդ՝ քրեական դատավարության մնացած փուլերը, կարծես թե, կատարում են օժանդակող, ապահովող դեր¹, իսկ բոլոր հիմնական գործառնություններն իրականացվում են հենց դատաքննության ընթացքում: Օրինակ՝ վերոգրյալի հաշվառմամբ՝ մենք հիմնականում կանդրահառնանք և կներկայացնենք դատաքննության այն պարտադիր պայմանները կամ սկզբունքները (պայմանականորեն է օգտագործվում այս եզրույթը), որոնք ունեն գործնական կարևոր նշանակություն և դատական պրակտիկայում հաճախ են հանդիպում այդ սկզբունքներից շեղումներ, դրա յուրովի մեկնաբանություններ, խոսքը, մասնավորապես դատաքննության անմիջականության և անընդհատության մասին է, որոնք թեպետ նախատեսված չեն որպես քրեական դատավորության սկզբունքներ, սակայն մեր գնահատմամբ հանդիսանում են հենց

ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2018 7 - 8 (229-230)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



այդպիսիք:

Դատաքննության բնավորության և անմիջականության սկզբունքների ապահովման նպատակով օրենսդիրը սահմանել է, որ գործը քննելիս դատարանի կազմն անփոփոխելի է, իսկ դատական քննությունը պետք է իրականացվի անընդհատ: Թեև օրենսդիրը դատական կազմի անփոփոխելիությունը և դատաքննության անընդհատությունը ներկայացնում է որպես դատական քննության ընդհանուր պայման, սակայն, մեր կարծիքով, այն դատաքննությունը կարգավորող սկզբունք է:

Դատարանի կազմի անփոփոխելիության էությունը այն է, որ (1) գործով ամբողջ ապացուցողական նյութը պետք է հետազոտվեն և ընկալվեն այն դատավորի կողմից, որը պետք է տվյալ քրեական գործով կայացնի դատավճիռ, (2) իրեղեն ապացույցները պետք է հետազոտվեն դատավորի ներկայությամբ և անմիջական մասնակցությամբ, դրանք չեն կարող ծառայել ապացույց այլ անձի պատմածի կամ նկարագրածի հիման վրա, (3) գործով անցնող անձինք պետք է հարցաքննվեն դատավորի ներկայությամբ, նա անձամբ պետք է լսի և շփվի նրանց հետ, իսկ անհրաժեշտության դեպքում հարցաքննի նրանց², (4) ի տարբերություն հետաքննիչի կամ քննիչի, դատավորն իրավունք չունի որոշ դատավարական կամ քննչական գործողությունների կատարումը հանձնարարել այլ դատավորի (բացառությամբ դատական հանձնարարությունների, որն այլ խնդիր է), (5) դատաքննության փուլում վկայի կամ տուժողի ցուցմունքների հրապարակումը հնարավոր է միայն օրենսգրքով նախատեսված բացառիկ դեպքերում (Օրենսգրքի 342 հոդված) և այլն:

Դրանով պայմանավորված օրենսդիրը սահմանել է, որ դատավորի մասնակցությունը դատական քննությանն անհնար լինելու դեպքում նա փոխարինվում է այլ դատավորով, իսկ գործի քննությունը վերսկսվում է (Օրենսգրքի հոդված

301-ի 2-րդ մաս), որպեսզի երաշխավորվեն հենց բանավորությունն ու անմիջականությունը:

ՀՀ օրենսդրության կիրառման պարագայում դատական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս սկզբունքը հաճախ դատարանները շրջանցում են կամ չեն պահպանում՝ ելնելով զուտ պրակտիկ նպատակահարմարությունից կամ այլ սկզբունքների ապահովման անհրաժեշտությունից:

Օրինակ, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանը քիվ ԵԿԴ/0011/01/13 գործով «քրեական գործը դատական քննությանն նշանակելու և գործի քննությունը վերսկսելու մասին» 2014 թվականի մարտի 21-ի որոշմամբ անդրադառնալով այս սկզբունքին նշել է. «ՀՀ քրեական դատավարական օրենսգրքի 301-րդ հոդվածով սահմանված է գործը քննելիս դատարանի կազմի անփոփոխելիության և դատական քննության անընդհատության սկզբունքը: Համաձայն այդ հոդվածի 1-ին մասի՝ յուրաքանչյուր գործ քննվում է դատարանի նույն կազմով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորի մասնակցությունը դատական քննությանն անհնար լինելու դեպքում, նա փոխարինվում է այլ դատավորով, իսկ գործի քննությունը վերսկսվում է: Քրեադատավարական օրենսգրքի այդ և այլ հոդվածները վերսկսման հասկացության էությունը չեն բացահայտում, մասնավորապես՝ վերսկսման պահի տեսանկյունով: Գործի քննությունը սկզբից սկսելու դեպքում դատարանը պարտավոր է կրկնել արդեն իսկ կատարված դատական բոլոր գործողությունները, վերստին կայացնել համապատասխան որոշումներ, ինչը միտված է գործը վարույթ ընդունած նոր դատավորի կողմից քրեական գործի բոլոր հանգամանքներն անմիջականորեն պարզելուն, ազդում է վերջնական դատական ակտ կայացնելուն նախորդող գործընթացի՝ դատարանի

ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2018 7 - 8 (229-230)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն

վորի ներքին համոզմունքի շեղումները վրաս, հանդիսանում է հիմնավորված, պարզաբանված և օրինական վերջնական դատական ակտ կայացնելու իրավական երաշխիքներից մեկը: Գործի քննության վերսկսելու և ընդհատման պահից շարունակելու դեպքում դատաքննության արդյունքներն իրենց իրավաբանական ուժն ու նշանակությունը չեն կորցնում, միաժամանակ դրանով իսկ, անշուշտ իրավական համարժեք երաշխիքների ապահովման պայմաններում, ընկերվում է ողջամիտ ժամկետում գործի քննությունը շարունակելու և ավարտելու օբյեկտիվ հնարավորություն, ինչը հարկապես էական է մեծածավալ և բարդ քրեական գործերի քննության պայմաններում, քանի որ գլխավորապես աշխարհի գործերի քննության ողջամիտ ժամկետի չպահպանման հետևանքով է ի հայտ գալիս անհանգստացող և այդ թվում՝ անազատության մեջ գրվողների արդար դատաքննության իրավունքի խախտման վրանգ: Հանրային և մասնավոր շահերի ողջամիտ հավասարակշռման տեսանկյունով գործի քննությունը վերսկսելու պահին վերաբերող վերոնշյալ հակադիր մեկնաբանությունները սույն քրեական գործի հետազոտմամբ պարզած փաստական հանգամանքների վրա փարածելով՝ Դատարանը գրնում է, որ մեծածավալ այս գործի քննությունը սկզբից սկսելն ու արդեն իսկ հարցաքննված բազմաթիվ վկաներին վերադառնալու հարցաքննելը չի բխի արդարադատության շահերից, կհանգեցնի սույն գործով ամբաստանվող, այդ թվում՝ րևական ժամանակ անազատության մեջ գրվող անհանգ չ՛ Սահմանադրությամբ և միջազգային իրավական ակտերով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի խախտման...: Անշի արդար դատաքննության իրավունքն ամբողջով է չ՛-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին»

եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածով, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք, ի թիվս այլ նվազագույն իրավունքների, ունի նաև հետևյալ իրավունքները(...):

գ. պաշտպանելու իրեն անհամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,

դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության (...):

Նույն իրավունքներն ամբողջով է նաև չ՛ Սահմանադրության 19-րդ հոդվածով, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի (...) իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»: Սահմանադրության և Կոնվենցիայի վերոնշյալ դրույքների համաձայն՝ պետությունը պարտավոր է երաշխավորել քրեական մեղադրանքի առնչությամբ օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության՝ անշի իրավունքը: Վերոնշյալ

ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2018 7 - 8 (229-230)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



մեջբերումներից ակնհայտ է, որ արդար դատաքննության իրավունքի բաղադրիչներից է նաև ողջամիտ ժամկետում իր վերաբերյալ գործի դատաքննության իրավունքը: Օրենքի և դատարանի առջև հավասարության սկզբունքն ամրագրած ՀՀ քրեական դատավարական օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով ՀՀ վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները, պարտադիր են դատարանի համար նույնաման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իր մի շարք վճիռներում հարույկ անդրադարձ է կատարել դատաքննության ժամկետի ողջամտության խնդրին և այն որոշելու չափանիշներին՝ փաստելով, որ այդ պահանջը վերաբերելի է ոչ միայն դատաքննությանը, այլ դատավորության բոլոր փուլերին, նույնիսկ՝ դատավճռի կայացմանը հետևած փուլին (*Robins v. the Unaited Kingdom*, զանգար թիվ 22410/93 1997թ. սեպտեմբերի 23 վճիռ, պարբ. 28): Եվրոպական դատարանը մեկ այլ վճռում փաստել է, որ քրեական գործով ողջամիտ ժամկետի հոսքը սկսվում է այն պահից, երբ անձին մեղադրանք է առաջադրվում: Ավելին, գործի քննության փուլերի ողջամտությունը յուրաքանչյուր կոնկրետ գործով պետք է գնահատվի այդ գործի հանգամանքների լույսի ներքո՝ դատարանի նախադեպային իրավունքում սահմանված հետևյալ չափանիշներով՝ գործի բարդություն, դիմողի և համապատասխան մարմնի վարքագիծ, վեճի առարկայի՝ դիմողի համար էական լինելը (*Kesyau v. Russia*, զանգար թիվ 36496/02, 2006թ. հոկտեմբերի 19-ի վճիռ, պարբ. 53): Գործի բարդության աստիճանը գնահատելիս՝ Եվրոպական դատարանը, ի թիվս այլ չափանիշների, հիշարտա-

կել է՝ հասարաման ենթակա փաստերի բնույթը (*Triggiani v. Italy*, զանգար թիվ 13509/88, 1991թ. փետրվարի 19-ի վճիռ, պարբ. 17), մեղադրյալների և վկաների քանակը (*Angelucci v. Italy*, զանգար թիվ 12666/87, 1991 թ. փետրվարի 19-ի վճիռ, պարբ. 15): Եվրոպական դատարանը նաև արշանագրել է, որ այն դեպքում, երբ ամբաստանյալը չգտնում է արագացնել քննության ընթացքը, այն պետք է դիտարկվի որպես նրա օգտին խոսող հանգամանք, սակայն վերջինիս կողմից գործի ընթացքն արագացնել չցանկանալը չունի որոշիչ նշանակություն, այսինքն՝ վարույթն իրականացրած մարմնի կողմից գործի քննության չգճգումն արդարացնելու հիմնավոր և բավարար փաստարկ չէ (*Ceteroni v. Italy*, զանգարներ թիվ 22461/93 և 22465/93, 1996թ. նոյեմբերի 15-ի վճիռ): Մեկ այլ գործով կայացրած վճռում Եվրոպական դատարանը հարույկ ընդգծել է վերոնշյալ խնդրում Ազգային դատարանների դերակատարությունը՝ արշանագրելով, որ դատական իշխանությունների՝ գործի քննությունն առավելագույնս արագացնելուն ուղղված ջանքերը կարևոր դեր են խաղում Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքները (մեղադրվող կամ ամբաստանվող) անձի նկատմամբ ապահովելու հարցում (*Vernillo v. France*, զանգար թիվ 11889/85, 1991թ. փետրվարի 20-ի վճիռ, պարբ. 38): ... «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ իրավական ակտերը գործում են ՀՀ Սահմանադրության և սույն օրենքով սահմանված առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերի գերակայության սկզբունքի հիման վրա: Իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են ՀՀ Սահմանադրության և սույն օրենքով նախատեսված ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերը»³:

Վերոգրյալ վերլուծության հիման վրա դատարանը գործի քննությունը շարունակել է ընդհատված պահից, այլ ոչ թե

վերսկսել է դատաքննությունը: Ինչ վերաբերում է դատարանի բերած պատճառաբանություններին, ապա դրանք ակնհայտ բավարար չեն գործող օրենսդրության կանոնակարգումները շրջանցելու համար: Առավել խնդրահարույց է դատարանի այն մոտեցումը, որը վերաբերում է կալանքի տակ անձանց գտնվելու խնդրին, քանի որ դատարանը կարող էր պարզապես փոխել այն: Դատարանի ներկայացրած մոտեցումներից առավել հիմնավորը և սկզբունքայինը ողջամիտ ժամկետի հետ կապված փաստարկումն է, որի հետ մենք ևս համամիտ ենք, սակայն այդ փաստարկի վրա հիմնվելով հնարավոր չէ ամտեսել Օրենսգրքի 301-րդ հոդվածը, որը փաստացի տեղի է ունեցել վերոնշյալ դեպքում:

Ինչևէ պետք է նկատել, որ մնան մոտեցումները եզակի են դատական պրակտիկայում և հիմնականում մեծածավալ և բազմադրվագ քրեական գործերով են հանդիպում: Մեր կողմից կատարած ուսումնասիրությունների և դատավորների հետ անցկացրած անհատական հարցումների արդյունքում պարզ դարձավ, որ դատարանները, որպես կանոն, վերսկսում են դատաքննությունը և նորից իրականացնում այն բոլոր դատավարական և քննչական գործողությունները, որոնք արդեն իսկ կատարվել են այլ դատավորի նախագահությամբ իրականացված քննության ընթացքում⁴, իսկ հաճախ հանդիպում են դեպքեր, երբ դատարանը թեև վերսկսում է գործի քննությունը, սակայն կողմերի միջնորդությամբ դատարանը սահմանափակվում է նախորդ դատավորի նախագահությամբ հարցաքննված վկաների և այլ անձանց ցուցմունքների արձանագրությունները հրապարակելով, իսկ առանձին դեպքերում, եթե կողմերից որևէ մեկը պահանջում է որևէ գործողություն կրկին կատարել, ապա դատարանը իրականացնում է կոնկրետ գործողությունը:

Կարծում ենք՝ ձևավորված պրակտիկան անհրաժեշտ է օրենսդրական

կանոնակարգման ենթարկել և օրենքով հնարավոր համարել գործի քննությունը շարունակելու ընդհատված պահից: Այս մոտեցումը հիմնավոր է այնքանով, որքանով գործող քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված են այնպիսի կառուցակարգեր, որոնց դեպքում դատարանն իրավունք ունի առանց բանվորության և անմիջականության սկզբունքների պահպանմամբ սպացույցներ հետագոտելու, դատավորի կողմից գուտ իր աշխատասենյակում գործի նյութերին ծանոթանալու արդյունքում կայացնելու դատավճիռ, խոսքը մասնավորապես վերաբերում է արագացված դատաքննության կարգին: Հետևաբար, կարծում ենք, որևէ լուրջ իրավական փաստարկ չի կարող բերվել այլ գործերով դատաքննության մի մասն իրականացնել բանվորության և անմիջականության ապահովմամբ, իսկ մյուս մասի դեպքում սահմանափակվել նախորդ դատավորի նախագահությամբ իրականացված քննության արդյունքները հրապարակելով:

Կարևոր է նկատել, որ այս սկզբունքի գործնական իրացումն ապահովելու համար Նախագծով առաջարկվում է առանձին գործերով պահեստային դատավորի ինստիտուտը, որը ևս ողջամիտ և իրավաչափ լուծում է, սակայն, կարծում ենք, որ վերևում նշված մոտեցման նախատեսման դեպքում էլ է հնարավոր բացառել գործնականում առաջացող խնդիրները:

Քրեական գործի քննության անընդհատության էությունը այն է, որ դատավորը մինչև սկսված գործի քննությունը չավարտի կամ չկասեցնի, կամ չհետաձգի այլ քրեական գործը չպետք է քննի (Օրենսգրքի 301-րդ հոդված, մաս 3-րդ), որպեսզի արդարադատությունն իրականացվի արագ, անձանց իրավունքները վերականգնվեն արագ, անձանց կարգավիճակի հարցում մտցվեն հստակություն: Այս սկզբունքի միջոցով երաշխավորվում է նաև դատավորի և դատավարության մասնակիցների կողմից կոնկրետ գործի

ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2018 7 - 8 (229-230)



հանգամանքների վրա առավել կենտրոնացած աշխատելու հնարավորությունը, դատաքննությունն առավել արդյունավետ իրականացնելը, քանի որ դատավորը չի կարող առավել ուշադիր, կենտրոնացած քննել մի քանի քրեական գործ միաժամանակ:

Դատարաններում իրականացրած մեր դիտարկումները ցույց տվեցին, որ երբ դատավորները միաժամանակ մի քանի քրեական գործեր են քննում, մի գործը հետաձգում են, որպեսզի մյուս գործի քննությանն անցնեն, ապա հաճախ շփոթում էին գործի հանգամանքները, չէին հիշում, թե կոնկրետ գործով ապացույցների հետազոտման ինչ կարգ են սահմանել, ինչ գործողություններ են կատարել և ինչ պետք է կատարելին և այլն:

ՌԴ-ում կատարված դատախրավական բարեփոխումների արդյունքում հրաժարվել են անընդհատությունից՝ հաշվի առնելով դատավարական խնայողության խնդիրը: Ըստ որոշ հետազոտությունների՝ այս սկզբունքից հրաժարումը բարձրացրել է դատարաններում գործերի քննության արագությունը⁵, սակայն նաև մոտեցում կա, որ քրեական դատավարությունը միայն արագ քննության սկզբունքի վրա կառուցելը սխալ է, քանի որ, ըստ հեղինակի, դրա փոխարեն կարելի է հանցագործի հետ հաշվեհարդար տեսնել հենց հանցագործության կատարման վայրում և տվյալ պարագայում քրեական դատավարության անհրաժեշտություն չի առաջանա⁶:

Կարևոր է նկատել, որ Նախագծով այս սկզբունքը այլ ձևակերպում է ստացել, մասնավորապես Նախագծի 276-րդ հոդվածն ամրագրում է՝ «...ապացույցների հետազոտման անընդհատությունը», որի էությունն այն է, որ «Նախքան հիմնական դատախոսներում ապացույցների հետազոտումն ավարտելը կամ ապացույցների հետազոտման ընթացքում հիմնական դատախոսները հետաձգելը այլ քրեական վարույթ իրականացնել չի քույլատրվում»:

Այսպիսով, եթե գործող օրենսգրքում ամրագրված է դատական քննության անընդհատությունը, ապա նախագծով ապացույցների հետազոտման անընդհատությունը, ինչից հետևում է, որ նախագիծը, ի տարբերություն գործող օրենսգրքի, նեղացրել է այս սկզբունքի կիրառման սահմանները:

Այդուհանդերձ, անկախ սկզբունքի կիրառման սահմաններից, այն ունի մույն բովանդակությունը և լուծում է մույն խնդիրները, ինչ գործող օրենսդրությամբ, սակայն խնդիրն այն է, որ դատական պրակտիկայում այդ սկզբունքը ևս չի պահպանվելու և շրջանցվելու է, քանի որ գործնականում այն խոչընդոտներ է ստեղծելու քրեական գործերի քննության ողջամիտ ժամկետների, դատական նիստերի կազմակերպման և այլ առումներով:

Այս սկզբունքի խախտումը հիմնականում դրսևորվում է, երբ դատարանները հաճախ առանց օրենքով նախատեսված հիմքերի հետաձգում են դատական նիստերը, որպեսզի կարողանան այլ քրեական գործեր քննեն: Բանն այն է, որ օրենքը նախատեսում է նիստերի հետաձգման հիմքեր, մինչդեռ այդ հիմքերը միշտ չէ, որ առկա են լինում, սակայն, եթե դատարանը չհետաձգի դատաքննությունը, ապա չի կարող այլ քրեական գործ քննել, ուստի առանց օրենքով նախատեսված հիմքերի հետաձգում են նիստերը:

Դատական պրակտիկայում առավել տարածված է դատական նիստերը հետաձգելու այն հիմքը, ինչպիսին պաշտպանների և մեղադրողի կողմից այլ դատարանում նշանակված նիստին մասնակցելու անհրաժեշտությունը, ինչպես նաև դատարանի կողմից այլ գործի քննություն կատարելը, կալանքի կամ բնակարանի խուզարկության միջնորդությունների քննարկումը, երբ դատավորը հերթապահում է և անհրաժեշտ է հրատապ քննել տվյալ միջնորդությունները և այլն:

Մեր հարցադրումներին ի պատաս-

խան դատավորները հայտնում էին, որ ծանրաբեռնված աշխատելու պայմաններում, եթե մի քրեական գործի վրա դատարանը կենտրոնանա և միաժամանակ մի քանի գործերով միստեր շնչանակի, ապա խնդիրներ կառաջանան այլ գործերով ողջամիտ ժամկետների հետ, իսկ եթե քրեական գործով կալանքի տակ առկա են անձինք, ապա կխախտվեն այդ անձանց իրավունքները և այլն:

Թեև դատավորների պատճառաբանությունները չեն բխում օրենքից, սակայն հանուն ճշմարտության պետք է ընդունել, որ դրանք հիմնավոր պատճառներ են:

Բանն այն է, որ Դատական միստերը պարբերաբար հետաձգվում են կողմերի դատարան չներկայանալու և նրանց դատարան ներկայացնելու հետ կապված առաջանում են բազմաթիվ խնդիրներ, իսկ այդ պայմաններում դատավորը չի կարող նախապես տեղյակ լինել, թե կոնկրետ գործով անցնող անձինք նշանակված օրը և ժամին կներկայանան դատարան, թե ոչ, ուստի դատավորները բոլոր գործերով նշանակում են դատական միստեր և ըստ այդմ, եթե որևէ գործով ներկայանում են անձինք, ապա իրականացնում են դատաքննություն՝ դրանով թեթևացնելով նաև ծանրաբեռնվածությունը: Մեր կողմի իրականացված դատավարությունների դիտարկումների ընթացքում, օրինակ, թիվ ԵԱՆԴ/0030/01/16 քրեական գործով տուժողը դատարանին խնդրեց հետաձգել դատական միստն այն պատճառաբանությամբ, որ ցանկանում է փաստաբան հրավիրել և հարցաքննվել նրա ներկայությամբ, իսկ Դատարանը, հաշվի առնելով տուժողի օրինական պահանջը հետաձգեց միստը՝ նշանակելով հաջորդ միստի օրը, սակայն տուժողը չներկայացավ միստին և դրանից հետո դատարանի կողմից ուղարկված ծանուցումները չէին վերցվում: Մեկ այլ՝ ԵԱՆԴ/0004/01/15 քրեական գործի դատաքննության ընթացքում դատարանն իրականացնում էր վկայի հարցաքննություն, սակայն քանի որ աշխատանքային օրը ավարտվեց,

ուստի դատարանը դադարեցրեց վկայի հարցաքննությունը, բայց դատարանը հաջորդ աշխատանքային օրը չկարողացավ միստը շարունակել, քանի որ մեղադրողին և պաշտպաններին համար չէր՝ այդ օրը նրանք այլ գործերով նախապես նշանակված միստի էին մասնակցելու, ուստի դատարանը խախտելով օրենքի պահանջը հետաձգեց միստը՝ նշանակելով մոտ 10 օր անց, սակայն վկան այլևս դատարան չներկայացավ, իսկ դատարանի կողմից նրան ուղարկված ծանուցումները չէին վերցվում:

Այսինքն՝ վերոնշյալ քրեական գործերով դատարանը փաստացի իրականացնում է ապացույցների հետազոտում, իսկ Օրենսգրքի 301 հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ դատարանը չի կարող այլ քրեական գործ քննել: Հարց է առաջանում վերոնշյալ դեպքերում, քանի անգամ կարող է հետաձգվել դատական միստը և ինչ միջոցներ ձեռնարկել տվյալ անձանց դատարան բերելու և ապացույցների հետազոտումն ավարտելու համար: Այսպիսի պայմաններում անհնար է խոսել դատաքննության անընդհատության մասին և պրակտիկայում ապահովվել դրա իրականացումը: Այս սկզբունքի պրակտիկ իրագործումը անհնար է առավելապես օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, քանզի դատական միստերը նշանակվում են կողմերի հետ համաձայնեցնելով, իսկ պաշտպանները և դատախազները բազմիցս նշում են, որ այլ գործի քննության պետք է մասնակցեն կամ չեն կարող ներկայանալ միստերին այլ պատճառաբանություններով:

Հետևաբար վերոնշյալ պայմաններում վերլուծելով առկա դատական պրակտիկան հեղինակի կողմից առաջ է քաշվում այն վարկածը, որ կիրառության և արդարադատության ողջամիտ ժամկետի տեսանկյունից ավելի նպատակահարմար կլինի հրաժարվել անընդհատության սկզբունքից և դատարանի կազմի փոփոխվելուց հետո գործի քննությունը շարունակել ընդհատված մասից:



Քրեական դատավարություն

- ¹ Մ. Ս. Ստրոգովիչը, անդրադառնալով նախաքննության դերին և նշանակությանը քրեական դատավարության փուլային համակարգում, նշում է, որ նրա դերը հիմնականում այն է, որ նախապատրաստվի նյութեր դատարանի համար, որոնք անհրաժեշտ են գործի ըստ էության լուծման համար: Նախանական քննության փուլում հավաքվում և հետազոտվում են ապացույցներ, որոնք հաստատում են քրեական գործի համար էական հանգամանքներ, փաստեր, սակայն նախաքննության փուլում հավաքված ապացույցները կարող են դրվել դատավճռի հիմքում, դատարանի կողմից դատաքննության ընթացքում ստուգվելուց և հետազոտվելուց հետո //Տե՛ս Строгович М. С., Курс Советского уголовного процесса, М., 1970, с. 222-223:
- ² Տե՛ս Лившиц В. Я., Принцип непосредственности в советском уголовном процессе, М., 1949:
- ³ ՀՀ Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի արխիվ:
- ⁴ Տե՛ս օրինակ, թիվ ԵԱՆԳ/0004/01/15 քրեական գործը:
- ⁵ Տե՛ս Головки И. В., Курс уголовного процесса, М., 2016, с. 87:
- ⁶ Տե՛ս նույն տեղում:

RESUME - РЕЗЮМЕ

PRINCIPLES OF THE COURT'S INVIOABILITY AND CONTINUOUS TRIAL IN THE COURT OF FIRST INSTANCE

Arpi Lazaryan
*YSU Faculty of Law Graduate,
Judge Assistant at the RA Criminal Court of Appeal*

A number of institutes were subjected to radical changes in the scope of judicial reforms. In this article we referred to one of those principles. The principle of the continuity of the trial and the inviolability of the court's chamber were analyzed within the framework of the article and, moreover, problematic issues related to the usage of the principle were raised. Finally, we discussed whether these problems are solved in the draft of law.

Key words: trial, continuity, court's chamber, inviolability, reasonable term, witness, principle.

НЕИЗМЕННОСТЬ СОСТАВА СУДА И ДЕЙСТВИЕ ПРИНЦИПА НЕПРЕРЫВНОСТИ СУДЕБНОГО РАЗБИРАТЕЛЬСТВА В СУДЕ ПЕРВОЙ ИНСТАНЦИИ

Арпи Лазарян
*Выпускница юридического факультета ЕГУ,
Помощник судьи в Апелляционном уголовном суде РА*

На данном этапе проведения судебно-правовых реформ многие процессуальные институты подверглись радикальным изменениям. В данной работе мы проанализировали один из таких принципов, а именно рассмотрели принцип непрерывности судебного разбирательства на современном этапе: определили проблемные вопросы, связанные с применением изучаемого принципа, какое решение этих проблем предусмотрено в Проекте нового Уголовно-процессуального кодекса.

Ключевые слова: судебное производство, непрерывность, состав, неизменность, разумный срок, свидетель, принцип.

Բանալի բառեր - դատավարություն, անընդհատություն, կազմ, անփոփոխելիություն, ողջամիտ ժամկետ, վկա, սկզբունք:

ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2018 7 - 8 (229-230)